«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 10;

30.05.2024 թ.

1. Դասախոսական կազմի աշխատանքային պայմաններից բավարարվածության գնահատման արդյունքների վերաբերյալ

1.1. Ընդունել ի գիտություն:

1.2. Հանձնարարել ՈԳԱԿ տնօրեն Ա. Դաշտոյանին ՀԱԱՀ դասախոսական կազմի աշխատանքային պայմաններից բավարարվածության գնահատման արդյունքներն ամփոփել և ներկայացնել ռեկտորատի անդամներին:

2. ՀԱԱՀ ռեկտորատի նախորդ նիստի որոշումների կատարողականի վերաբերյալ.

2.1. Ընդունել ի գիտություն:

2.2. Հանձնարարել իրավաբանական բաժնի պետ Մ. Վարդանյանին և Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի դեկան Ս. Դավեյանին լրացուցիչ քննարկել և սեղմ ժամկետում հաստատման ներկայացնել Նելլի Արմանի Անդրյանի ուսանողական իրավունքների վերականգնման հրամանը:

3. Համալսարանում ուսումնական պարապմունքների կազմակերպման և ավարտական աշխատանքների պաշտպանության գործընթացի, խնդիրների և բարելավման ուղիների վերաբերյալ.

3.1. Ընդունել ի գիտություն:

3.2. Հանձնարարել դեկաններին՝ մինչև 2024թ. հունիսի 17-ը ներկայացնել առաջարկություններ ինքնուրույն աշխատանքների գնահատաման կանոնակարգի վերաբերյալ:

4. ՀԱԱՀ-ում գործող կանոնակարգերում փոփոխություններ կատարելու կարիքների քննարկման վերաբերյալ.

4.1. ՀԱԱՀ ուսանողների գիտելիքների գնահատման կանոնակարգում առաջարկվող փոփոխությունները ներկայացնել գիտական խորհրդի քննարկմանը.

- Ուսանողների ինքնուրույն աշխատանքների պաշտպանության վերջնաժամկետը սահմանել քննությունից 3 օր առաջ: Այս վերջնաժամկետը պահպանելով ամբիոնները պետք է սահմանեն ինքնուրույն աշխատանքների ներկայացման վերջնաժամկետներ:

- Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին և ՈԳԱԿ տնօրեն Ա. Դաշտոյանին ինքնուրույն աշխատանքներ չներկայացրած և ամփոփիչ քննությունից անբավարար գնահատական ստացած հեռակա ուսուցման համակարգի ուսանողներին՝ ինքնուրույն աշխատանք ներկայացնելու, պաշտպանելու լրացուցիչ հնարավորություն ընձեռելու հարցը քննարկել և ներկայացնել առաջարկություններ մինչև ս.թ. հունիսի 17-ը:

4.2. Հանձնարարել գիտական քարտուղար Գ. Ավագյանին ՀԱԱՀ ռեկտորատի քննարկմանը ներկայացված Ուսանողների գիտելիքների գնահատման կանոնակարգում գիտելիքի գնահատման բազմագործոնային համակարգում առաջարկվող փոփոխությունները ներկայացնել ստորաբաժանումների քննարկմանը.

Հ/հ	Բազմագործոնային գործող համակարգը		Բազմագործոնային առաջարկվող համակարգը, 2024-2025	
	Առկա ուսուցման համակարգ (բակալավրիատ, մագիստրատուրա)			
1	Հաճախում	15%	Հաճախում	15%
2	Ինքնուրույն աշխատանք	20%	Ինքնուրույն աշխատանք	30%
3	Միջանկյալ քննություն	30%	Միջանկյալ քննություն	25%
4	Ամփոփիչ քննություն	35%	Ամփոփիչ քննություն	30%
	Հեռակա ուսուցման համակարգ (բակալավրիատ, մագիստրատուրա)			
1	Հաճախում	15%	Հաճախում	15%
2	Ինքնուրույն աշխատանք	20%	Ինքնուրույն աշխատանք	30%
3	Ամփոփիչ քննություն	65%	Ամփոփիչ քննություն	55%

4.3. ՀԱԱՀ դասախոսների բեռնվածության նորմերում առաջարկվող փոփոխությունները ռեկտորատի դրական կարծիքով ներկայացնել ՀԱԱՀ գիտական խորհրդի քննարկմանը.

- ՀԱԱՀ քոլեջներում մեկ հոսքում սովորողների թիվը սահմանել մինչև 30, խմբերում և ենթախմբերում՝ մինչև 19 ուսանող:

- Բակալավրիատում և մագիստրատուրայում (առկա, հեռակա) խմբերում ուսանողների և մագիստրանտների թիվը սահմանել մինչև 30, իսկ Անասնաբուժություն և Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն կրթական ծրագրերի դեպքում՝ մինչև 20 ուսանող: Ենթախմբերում ուսանողների և մագիստրանտների թիվը սահմանել մինչև 17, իսկ Անասնաբուժություն և Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն կրթական ծրագրերի դեպքում՝ մինչև 10 ուսանող:

- Բակալավրիատում և մագիստրատուրայում (առկա, հեռակա) ուսանողների ինքնուրույն աշխատանքների պաշտպանության համար դասախոսի բեռնվածությունը սահմանել 1 ժամ՝ 2 ուսանողի համար,

- Ամբիոնի վարիչի լսարանային ծանրաբեռնվածությունը սահմանել՝ թողարկող և/կամ գիտական գործընթացներում ներգրավված ամբիոնի վարիչի համար 0,5 հաստիք, իսկ չթողարկող և/կամ գիտական գործընթացներում չներգրավված ամբիոնի վարիչի համար՝ 1,0 հաստիք:

5. ՀԱԱՀ ռազմավարական գործողությունների պլանի ցուցիչների և ինստիտուցիոնալ հավատարմագրման համատեքստում հաստատված «Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի» կատարողականի ընթացիկ հաշվետվության վերաբերյալ.

5.1. Ընդունել ի գիտություն:

5.2. Հանձնարարել ՈԳԱԿ տնօրեն Ա. Դաշտոյանին սեղմ ժամկետում իրականացնել ինքնուրույն աշխատանքների մոնիթորինգ:

6. ՀԱԱՀ հեռակա ուսուցման համակարգի նախաավարտական կուրսերի ուսանողներին կրեդիտային պարտքերը հանձնելու հնարավորություն տալու հարցի վերաբերյալ

ՀԱԱՀ Ագրոբիզնեսի և տնտեսագիտության, Ագրարային ճարտարագիտության, Ագրոնոմիական ֆակուլտետների հեռակա ուսուցման համակարգի կրեդիտային պարտքեր ունեցող թվով ութ ուսանողներին հնարավորություն տալ հանձնելու կրեդիտային պարտքերը:

7. Աշխատանքային բարեվարքության նորմերի պահպանման վերաբերյալ

Ընդունել ի գիտություն:

8. Մագիստրատուրայի ընդունելության հարցի վերաբերյալ

Հանձնարարել Հասարակայնության հետ կապերի ու լրատվության բաժնի պետ Ս. Ավետիսյանին, Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Հ. Հովհաննիսյանին, ՏՏ կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին սեղմ ժամկետում կազմել Ագրարային համալսարանը գովազդող հոլովակների տեքստը:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ.Ս. ԶԱՔՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ